




ՅԵՄԱՆՈՒՄ ԲԵՐՈՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԱ. ՊԱՏՐԻԱՐԲ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂԱՓԱՌԱՅ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ՊԱՋԷՆ ՀՈՌԱՄԱՅ

Պատական Եղբայր Մերոց Արքայապետ՝ Արքայիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց, եւ ամենայն Ուխտի Մերոյ Եկեղեցւոյ՝ Վարդապետաց, Երիցանց, Վանականաց եւ ամենայն Հաւատացեալոց ի Քրիստոս Որդւոց Մերոց սիրեցեաց շնորհք, ուր եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօր եւ ի Տեառնէ Մերէն Յիսուսէ Քրիստոսէ բաղմանցի, Ամեն :

Պատական Եղբայր եւ Սիրեցեալ Որդեակի ի Քրիստոս,

Հռոմայ Սրբազան Քահանայապետք, որք երկրիս վրայ Յիսուսի Քրիստոսի Տեառն Մերոյ Փաշտօնորդներն, եւ հետեւաբար Պետրոս Առաքելապետին օրինաւոր Յաջորդներն են, Եկեղեցւոյ եւ Հաւատացեալոց ամեն ծանր պիտայից մէջ, հոգեւոր եւ ժամանակաւոր չարիքները եւ աղէտները իրենցմէ հեռացնելու, եւ Աստուծոյ հոգեւոր եւ ժամանակաւոր բարիքներ հաղթելու համար, սոխր են, իբրեւ ինամատար եւ հոգածու Հայր, Եկեղեցւոյ զանձները բանալ հաւատացեալոց առջեւ, որպէս զի ծովապահութեամբ, պահօք, աղօթքներով, խնդրումներով եւ օրհնութեամբ, եւ իրենց մեղացի զորաց զղլալով, Աստուծոյ ողորմութիւնը հաղթեն, որուն Յօրհրդան կամ Սուրբ Տարի անունը տրած են։ Այսպէս ներկայ Սրբազան Քահանայապետն Լեւոն ԺԳ., իբրեւ Գլուխ Եկեղեցւոյ եւ ընդհանուր Քրիստոնէութեան, Իննեւտասաներորդ Կաթողիկոս լրանալու եւ Քահանայապետի սկզբնաւորութեան առթիւ Սուրբ Յօրհրդանը հրատարակած է, եւ կը հրաւիրէ Կաթողիկէ Տեղեւորաց հաւատացեալները, որպէս զի, իբրեւ ճշմարիտ եւ բարի Քրիստոնեայք, կատարեալ զղջմամբ խոստմանով, Հաղորդութեան Սուրբ Խորհրդոյն մերձենալով, պահք եւ ծով պահելով, աղօթքներով եւ օրհնութեամբ ջանան իրենց մեղաց պատժոյ ներումը խնդրել Աստուծոյ, եւ իւր ողորմութիւնը հաղթել Եկեղեցւոյ եւ համբոյն աշխարհիս վրայ :

Եւ արդարեւ, մինչ մէկ կողմանէ անկրօնութիւն եւ անհաւատութիւն, ամբարշտութեան հոգով զինուալ, Քրիստոսի Եկեղեցւոյն դէմ զժողովին բռնութեամբ յարձակելով, ամենայն ճգամք կը մարտնչուի, կը պատերազմի եւ զայն կը հաշտէ, միւս կողմանէ սովք, սրածովութիւն, երկրի սասանութիւն, պատերազմներ եւ այլ անթիւ անհամար աղէտք՝ թշուառ ժողովուրդները, ի հոգեւոր եւ ի ժամանակաւոր, կը նեղեն եւ կը չարաբանեն։ Վասն որոյ Մեր այս Շրջաբերական Կոնգակաւն զԶեղ ամենքդ, Սիրեցեալ Որդեակք ի Քրիստոս, հայրաբար կը հրաւիրեմք եւ կը յորդորեմք, որպէս զի, ներկայ Մեծ Պահոյ մահահալան եւ ապաշխարութեան համար հաստատուած սուրբ օրերը պահօք, աղօթելք եւ մեղքերէ եւ մեղաց առթիւներէ զղուշանալով, զղջմամբ եւ խոստմանութեամբ Ձեր հոգիները սրբէք եւ մաքրէք, եւ այսպէս հրատարակեալ Յօրհրդանը շահելու պատրաստուելք, որոյ այլ եւ այլ պայմանները իւրաքանչիւր Վիճակի Հովին ժամանակին իւր ժողովրդեան պիտի ծանուցանէ :

Ինչպէս զլուսէք, Սիրեցեալ Որդեակք, յիշեալ Յօրհրդանը, անցեալ տարի, անոնք միայն կրնային շահիլ, որոնք անձամբ Հօսիմ երթալով, Պետրոս եւ Պօղոս Գլխաւոր Առաքելաց Գերեզմանին այցելութիւն կ'ընէին։ Սրբազան Քահանայապետն մեր Լեւոն ԺԳ. այդ Յօրհրդանը այս անգամ Վեց ամսուան համար բոլոր Տեղեւորաց տարածած եւ հրատարակած է իւր Քահանայապետական Կոնգակաւն, որոյ մէջ բոլանդակեալ պայմաններն են :

Ա. Ամեն Հաւատացեալք Վիճակաւորն նշանակուած Չորս Եկեղեցւոյն Տաճարներէ օր անընդ հատ, եւ իւր յարգելի պատճառմբ անձեռնաձեռն, նաեւ ընդ հատերով, Տանուհիներէ այցելութիւն ընեն, եւ Եկեղեցւոյ պայծառութեան, հերետիկոսութեանց եւ հերձուածոց բարձ-

ման, Կաթողիկէայ իշխանաց միաբանութեան, եւ Քրիստոնեայ ժողովրդեան վրկովեան համար ջերմ եռանդով առ Աստուած աղօթեն :

Բ. Ուր որ Չորս Եկեղեցի չգտնուին, իւրաքանչիւր Վիճակաւոր ըստ պատշաճի հարկ եղածը տնօրինէ. միայն թէ, ինչ որ ալ ըլլայ Եկեղեցեաց թիւն, ըլլալիք այցելութեանց թիւն միշտ վաթսուն պիտի ըլլայ :

Գ. Այն անձինք, որք նիւթապէս, կամ բարոյապէս յիշեալ այցելութիւնները ըստ մասին եւ կամ ըստ բոլորին կատարելու անկարող են, իւրաքանչիւր Վիճակաւորի եւ կամ առ այդ պաշտօն ունեցող Խոստովանահօր տնօրինմամբ կրնայ շահիլ յիշեալ լիակատար ներողութիւնը :

Դ. Կրնան վերոյիշեալ ներողութիւնը վերստին շահիլ նաեւ անոնք, որք անցեալ տարի յատկապէս Հօսիմ երթալով, յիշեալ ներողութիւնը չափած են :

Ե. Ամեն Հաւատացեալ վերոյիշեալ Վաթսուն, եւ կամ իւր Խոստովանահօր տնօրինմամբ նշանակուած այցելութիւնները կատարելէ յետոյ, կատարեալ զղջմամբ խոստովանելով, Հաղորդութեան Ամենասուրբ Խորհրդոյն պիտի մերձենալ :

Ձ. Բայց այս խոստովանութիւն եւ Ամենասուրբ Խորհրդոյն մերձենալը, Չատկական խոստովանութենէ ետք, զատ սխալ ըլլայ :

Է. Յօրհրդան Վեցամսեայ ժամանակն պիտի հաշուի այն օրէն, յորում, իւրաքանչիւր վիճակի Վիճակաւոր Եպիսկոպոսն, կամ Եպիսկոպոսական Տեղապահն, եւ կամ Կաթողիկոսական Փոխանորդն զայն պիտի հրատարակէ :

Ը. Այս առթիւ ամեն կարգի եւ հասակի Հաւատացեալք կը յանձնարարեմք յիշել աղքատները, որքերը, այլիները, հիւանդները, բանտարկեալները, ինչպէս նաեւ Եկեղեցւոյն, Կաթողիկոսի եւ ուրիշ բարեգործական Հաստատութիւնները, որպէս զի իւրաքանչիւր օր, իւր կարողութեան չափուն համեմատ իւր նմանեաց եւ եղբայր նկատմամբ ժամանակաւոր ողորմութիւն ընէ, որպէս զի Աստուած ալ իրեն յաւիտենական ողորմութիւնը չնորհէ :

Թ. Ինքա եւ Վաթսուն բնակող հաւատացեալք այցելութեան համար հետեւեալ չորս Եկեղեցւոյն կը սահմանուին. Ա. Ռիտու Փրիլի Մայր Եկեղեցի. Բ. Ս. Երրորդութիւն, Գ. Ս. Աստուածածին եւ Դ. Ս. Յովնան Ոսկեբերան։ Իսկ ի Բանկալի եւ ի Ֆէրիդուղ բնակողք, վոխահալ Յիսուս Փրիլի Մայր Եկեղեցւոյ Բանկալի վիճակաւոր Սրկիւարեան Հայր Սնարատ Յղութեան Հրապարակական եւ Ժողովրդապետական Մատան պիտի այցելեն :

Ուստի, Սիրեցեալ Որդեակք ի Քրիստոս, վաթսուցէք ամենքդ ալ, Սրբազան Քահանայապետէն հայրաբար շնորհուած այս լիակատար ներողութիւնը շահելով, աղօթելով ի մասնաւորի նաեւ իւր թանկագին կենաց երկարութեան եւ աշխարհիս լաւապետութեան համար, որպէս զի անցաւոր կենցաղիս մէջ անանց կենաց եւ յաւիտենական երջանկութեան նից արքայութեան մէջ անանց կենաց եւ յաւիտենական երջանկութեան արժանի ըլլաք։ Չանայէք ուրեմն, Մեծ Պահոյ այս սուրբ օրերուն մէջ, սրտի զղջմամբ եւ բարի բարի գործերով, աղօթքներով, ողորմութիւններով յիշեալ լիակատար ներողութիւնը շահելու ըստ արժանայն պատրաստուել, եւ արդեամբ ալ շահիլ։ Իսկ վեցամսեայ ժամանակին լրատարութիւն, եւ արդեամբ ալ շահիլ։ Իսկ վեցամսեայ ժամանակին լրատարութիւն, հանդիսապէս պիտի Պատարագեմք ի Ս. Յովնան Ոսկեբերան Եկեղեցւոյ, ինչպէս ապահով եմք թէ նոյն պիտի ընեն նաեւ Արհի. Վիճակաւոր Եպիսկոպոսք, Եպիսկոպոսական Տեղապահք եւ Կաթողիկոսական Փոխանորդք իրենց վիճակաց մէջ :

Ի վաթսանի Ձեր ամենուն ի բոլոր սրտէ Մեր հայրապետական Օրհնութիւնը շնորհելով մեամք

Ի Կաթողիկոսաբանէ ի Բերա Կ. Պոլսոյ, 12 Փետրուարի Բ. Տ. 1904, յերկրորդ Ամի Հայրապետութեան Մերոյ

Աղօթարար

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԱ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԲ ԿԻԼԻԿԻՈՅ

ՆԵՐՍԷՍ Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՔԱՐՏՈՂԱՐ

